ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցույթ՝ «ՀՀ Արարատի մարզի Լանջազատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Դասվար (13 դասաժամ), Շախմատ (5 դասաժամ), Հայոց լեզու և գրականություն (11 դասաժամ), Մաթեմատիկա (8 դասաժամ) , Երաժշտություն (8 դասաժամ) , Տեխնոլոգիա (9 դասաժամ), Տեխնոլոգիա 2 դասաժամ (տղաներ) , Կերպարվեստ (8 դասաժամ), ՀԵՊ (5 դասաժամ), Ինֆորմատիկա և թվային գրագիտություն և համակարգչային գիտություն (9 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
-Համակարգչային իմացությունը պարտադիր է:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թվականի սեպտեմբերի 6-ից մինչև սեպտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **սույն թվականի սեպտեմբերի 20-ին, ժամը 13:00-ին**, <<ՀՀ Արարատի մարզի Լանջազատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում հասցեն՝ Արարատի մարզ, գ. Լանջազատ ,Մեսրոպ Մաշտոց փողոց, 10/1 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել 077 06 11 88 հեռախոսահամարով: